

չին Ատրպատականի ոստիկան անուանած էր Մանքըուր ալ-Ֆերդանի, ալ-Աֆշինի փեսան: 224 (838/39)ին այս Մանքըուրը կ'ապտամբերի²² և Խալիֆայի շատ մը կուսակիցները կը սպաննէ²³: Այս նոր ապտամբը նուաճելու գործն ալ-Աֆշին, ըստ Եակուբի, Սալեաններուն նախահօր, Աբու-ս Սալ Դիվ-դադին կը յանձնէ: Սակայն Խալիֆային զաղտնի կերպով ծանուցուած էր՝ թէ ալ-Աֆշին Մանքըուրի հետ համամիտ է եւ այս պատճառաւ ալ-Մութասիմ այս ապտամբու-թեան զսպելը Բուղա Երէց թիւրքին յանձնեց, որ 225ին²⁴ կամ 226ին²⁵ Մանքըուր վերի բռնելով Սամարրա բերաւ:

Հոս պէտք է յիշատակել, որ Եակուբի այս տեղ²⁶ կը պատմէ՝ թէ Մանքըուր զՄու-համմէդ իրն Ուրէշլալլահ ալ-Վարթանի կը սպաննէ և այսու այս ալ-Վարթանի Խալի-ֆայի կուսակիցներու հետ մէկ գծի վրայ կը դնէ, մինչ ինքն իսկ երեք էջ յառաջ պատ-մած էր՝ թէ Մանքըուր ալ-Վարթանի ապ-տամբութիւնը զսպեց և թէ ալ-Վարթանի Խալիֆայէն անյիշուելիւն ընդունեցաւ: Մի և նոյն պատմագրի այս երկու ըստ երեւու-թին հակասական տեղեկութիւններն իմ կար-ծիքով միայն այն ժամանակ կարելի է իրա-րու հետ հաշտեցնել, երբ ընդունինք՝ թէ այս Վարթանը պատժոյ ներում ընդունելէն ան-միջապէս ետքն Առան վերադարձաւ և հոն, իրրեւ Խալիֆայի կուսակից, Մանքըուրէն սպաննուեցաւ: Սակայն այն ժամանակ այս ամէնն 225ի տարւոյն ընթացքին պատահած ըլլալու է, որովհետեւ սոյն տարին ալ-Աֆ-շին, որ նոյն Եակուբիի համաձայն Խալի-ֆայէն յանձնարարութիւն ստացաւ Մանք-ըուրի դէմ պատերազմ մղելու և այս վախ-ճանաւ Աբու-ս Սալ հոն առաքեց, բանտար-կուած է:

223ին ձեռնարկեց ալ-Մութասիմ իւր պա-տերազմական արշաւանքը բիւզանդացւոյ դէմ և այս ժամանակ ալ թեւին կը հրա-մայէր ալ-Աֆշին²⁷: Մինչեւ 225 հիւսիսային նահանգներն անոր հրամանատարութեան ներքեւ պէտք է որ մնացած ըլլային: Բու-

խարախուղահի մասին կ'ըսէ Եակուբի²⁸ որոշ կերպով՝ թէ ալ-Աֆշինէն անուանուած է, մինչ Խալիֆ իրն Եաղիզի մասին՝ թէ ալ-Մութասիմէն է անուանուած: Այս միջոցին է տկար Ալի իրն ալ-Հուսէյին, որ, Եակու-բիի բնազդին վրայէն դատելով, ըստ երեւու-թին սա եւս ալ-Աֆշինէն անուանուած է. Խալիֆ իրն Եաղիզի անուանումն, որուն ալ-Աֆշին չէ մասնակցած, 225էն յառաջ տեղի ունեցած ըլլալու է, ըստ հետեւորդի Համ-դուլէհի անուանումն ալ ոչ կանուխ քան 225: Միեւնոյն տարին ալ-Աֆշին կը բանտար-կուի²⁹, 226ին կը մեռնի³⁰:

Ալ-Վարթիք Խալիֆայի ժամանակ Հայաս-տան նոր խռովութիւններ կը սկսին և ամի-րապետը կ'առաքէ փորձուած Խալիֆ իրն Եա-ղիզն երրորդ անգամ³¹: Ստեփ. Ասողկիի համաձայն³² այս կը պատահի հայոց թուա-կանին 290 = 841 Յ. Ք. = 226/27 Հ.: Ասոր զարուստը ժողովրդեան մէջ սարսափ կը տա-րածէ և շատերն, որոնք ապտամբած էին, վերստին հնազանդութիւն կը խոստանան: Այս տեղ Վրաստանի տէր կը յիշատակուի դարձեալ Իսհակ իրն Իսմայէլ, որ արդէն 218էն ի վեր այս աշխարհամասն իւր տակն ունէր: Խալիֆ վախճանեցաւ ճիշդ այն ժա-մանակ երբ մտադիր էր այս Իսհակ իրն Իս-մայէլը վերստին իրեն հնազանդեցնել: Նա Դուին թաղուեցաւ և անոր տեղ իւր որդին Մուհամմէդ իրն Խալիֆ անուանուեցաւ³³, որ Սանարեանց և Իսհակ Բ. Իսմայիլի դէմ կորովարար պատերազմը շարունակեց, վեր-ջինն ստիպեց որ երկիրը թողու և իւր նա-հանգը բուռն բողկաւ կառավարեց:

Մովսէս Կաղանկատուացին³⁴ կը պատ-մէ, թէ Բաղդադէն երկու տարի յետոյ արիւ-նարբու մէկը, Խալիֆաուգոս անուամբ, Հայաստան առաքուեցաւ, որ սակայն տարի մ'անցնելէն յետոյ սպաննուեցաւ, որմէ յետոյ իւր որդին եկաւ: Ըստ Մարկուարտի³⁵ այսու միայն Խալիֆ և իւր որդին կրնայ հասկցուիլ:

²⁸ II, 580:
²⁹ Tab. III, 1303:
³⁰ Tab. III, 1314:
³¹ Ja'qābi II, 588:
³² էջ 265:
³³ Ja'qābi II, 588. Laurent, L'Arménie entre Byzance et l'Islam, 345, 346, կը նոյնացնէ զասիկա Մուհամմէդ իրն Խալիֆ Բուխարախուղահի հետ, որուն համար սակայն ո եւ է հիմ չկայ:
³⁴ էջ 265:
³⁵ Osteurop. Streifzüge, 462 = հայ. թրգմ., էջ 54:

²² Tab. III, 1301:
²³ Ja'qābi II, 583:
²⁴ Tab. III, 1302:
²⁵ Ja'qābi II, 584:
²⁶ II, 583:
²⁷ Tab. 1244:

Եթէ Բուխարախուղահ իրապէս միայն ալ-Վարթանի ապտամբութիւնը զսպելէն ետքն, ըստ այսմ 225ին, ոստիկան անուանուեցաւ, ինչպէս Եակուբիի խօսքէն կը թուի հե-տեւելի³⁶, այն ժամանակ ժամանակագրորէն ճիշդ կը համապատասխանէ Մովսէս Կաղան-կատուացւոյ պատմուածքին հետ: Այն ժամա-նակ Մուհամմէդ իրն Սուլէյման 220էն մինչեւ 225ի Մուհարրամն ոստիկանութեան պաշտօնն ունէր և ըստ այսմ Վարթիքի դահ-ելլեղէն մի քիչ յետոյ, 227ին, Խալիֆ առա-քուած ըլլալու է: Թէ Խալիֆ սպաննուած է, ինչպէս Մարկուարտ կը շեշտէ, կը համա-ձայնի վրական ժամանակագրութեան հետ, որուն համաձայն Խալիֆ, Իղիզի որդին, Հայաստան կատարած երրորդ արշաւանքի ժամանակ Ջաւախեթ կը սպաննուի³⁷:

Ալ-Մութալաքըլլ ամիրապետն 235ին (849/50) իւր պետութիւնն երեք մասի բաժ-նեց և ամէն մէկ որդւոյն մէկ մէկ մաս տուաւ: Ըստ Տաբարիի³⁸ Հայաստան և Ատրպատական ալ-Մուսաղի տրուեցան, որ բաց աստի Խուրասան, Տաբարիստան և Փարս ընդունած էր, ըստ Եակուբիի³⁹ Ասո-րիքի հետ Իբրահիմ ալ-Մուսայեաղի յանձ-նուեցաւ, որ ըստ Տաբարիի տեղեկութեան միայն Ասորիք ստացած է:

Բարսիկի դէմ մղուած պատերազմի մա-սին եղած տեղեկութեանց մէջ յաճախ Մու-համմէդ իրն ալ-Բայիթ իրն Հալբասի մասին խօսք կ'ըլլայ⁴⁰: Եակուբի⁴¹ կը պատմէ թէ նա Մարանդ երկիրն իրեն գրաւեց⁴² և թէ Ատրպատականի ոստիկանը՝ Համդուլէհ իրն ալ-Փաղլ աս Սաղի, որ, ինչպէս վերը նշա-նակուեցաւ, «որբուհի» անուանուած Հայաս-տանի ոստիկանին յաջորդեց, և որուն ոս-տիկանութիւնն ալ-Մութասիմի Խալիֆայու-թեան վերջերը դնելու է, անոր դէմ պատե-

³⁶ Laurent, 345, անոր անուանումն 840/41ին, ըստ այսմ 226ին կը դնէ, որ իմ կարծիքով շատ ուշ է:
³⁷ Brosset, Hist. de la Georgie, I, 265. Mar- quart, անդ, 408, 462 = հայ. թրգմ., էջ 110, 54:
³⁸ III, 1395, 1402:
³⁹ II, 595:
⁴⁰ Հմմտ. շ. 1927, 872:
⁴¹ II, 594:
⁴² Ըստ Բելազորիի 330 այս աշխարհամասն ար-դէն անոր պապին՝ Հալբաս Աբու 'լ Բայիթի կը վե-րաբերէր, որուն որդին ալ-Բայիթ ամրոցներով ամ-րացուց և այս ամրոցներու շինութիւնն ալ-Բայիթ ալ շարունակեց: Իսմա, որուն մասին վերը խօսք եղաւ, ժամանակ մ'անտարակոյ իրն ալ Բայիթը Մա-րանդէն վռնտած և սպա սա այս պատճառաւ վրէժն առած ըլլալու է:

բազմի ելաւ և դերի բռնելով Սամարրա տա-րաւ: Իրն ալ-Բայիթ զանգատեցաւ Խալի-ֆային Համդուլէհի մասին, որով վերջինս բանտարկուեցաւ, իսկ ինքը դարձեալ ազատ արձակուեցաւ: Իրն ալ-Բայիթ յաջորդեցաւ Մարանդ վերադառնալ, ուր յայտնի կերպով ամիրապետին դէմ ապտամբեցաւ: Տաբա-րի⁴³ անոր Մարանդ վերադարձն 234ին կը դնէ և կը պատմէ՝ թէ այս ժամանակ Ատր-պատականի ոստիկանն էր Մուհամմէդ իրն Հաթիմ իրն Հարթամա, որ ապտամբին դէմ չկրցաւ բան մ'ընել: Ասոր վրայ ամի-րապետն Համդուլէհ ազատ արձակեց և Ատրպատականի ոստիկան կարգեց: Տաբարի դեռ ուրիշ շատ զորավարներ ալ կը յիշէ, որոնք Համդուլէհի օգնութեան դրկուած են, որովհետեւ իրն ալ Բայիթի հետ գործը չէր կրնար լինցնել: Եակուբի կ'ըսէ՝ թէ Համդուլէհ այս պատերազմի մէջ ինչպէս և իրն ալ Բայիթի դիրքն երթալով միշտ աւելի զորացաւ: Անոր դէմ դրկուած զորավարներն ըստ Եակուբիի⁴⁴ կ'անուանուէին. Ջիրեք աթ-Թուրքի և Աթթար իրն Աթթար⁴⁵, մինչ ոստիկանութիւնը Բուղա Կրտսերոյն անցած էր: Վերջապէս իրն ալ Բայիթ դերի բռնուե-ցաւ և Սամարրա բերուեցաւ: Եակուբիին համաձայն 235ին այս պատահած է և քիչ մը վերջը նա մեռած ըլլալու է:

Թրգմ. Հ. Վ. ԻնՊԱԻՉԱՆ



ՀՈՂՄ-ՅՈՒՆՉ-ՀՈԳԻ ԳՆՂԱՓՈՒՆՆԵՐԸ ԵՋՆԻԿԻ ԳՈՎ

Մեր Հին Մատենագրութեան մէջ՝ Եղ-նիկի երկը մին է այն գործերէն, որոնք թէ՛ ազգային ու թէ՛ օտար բանասիրութեան ան-զնահատելի ծառայութիւն կը մատուցանեն: Յատկապէս հայ ազգագիրը մեծ երախտիք մը կը պարտի անմահ Եղնիկի, որ իր գող-արիկ «Եղծ աղանդոցին» մէջ՝ զիտցած է անոր աւանդել ազգային վաղնջական հաւա-

⁴³ III, 1380:
⁴⁴ II, 594:
⁴⁵ Տաբարի այս վերջնոյն տեղ Ամր իրն Սպասալ իրն Բայ մը կը յիշէ, որ Եակուբիի քով կը պակսի:

տարիքներ, որոնք այլապես մոռացումի են մեռելութեան պիտի դատապարտուէին: Այդ հաւատալիքներէն շատերը մինչեւ անյիշատակ դարեր կը հասնին իրենց հնութեամբ, երբ դեռ բնակակից էր Հայն իր հնդեւրոպական ցեղակիցներուն, անոնց լեզուն կը խօսէր եւ անոնց հաւատալիքներով կազմած էր իր կրօնը: Եւ հոս նկատի պիտի առնեմ այս հաւատալիքներէն մին. թէ Հովն ու հոգին իրարու հետ նոյն են:

Պահ մը հոգևով փոխադրուինք այն հին դարը, որուն մէջ համայն մարդկութիւնն իր մանկութեան տարիները կ'ապրէր: Հոն կը տեսնենք անքաղաքակիրթ մարդկութիւնը խորհրդաւոր տիեզերքին դադանիքներուն առջեւ՝ հիացումով ու վախով կեցած: Նախամարդը հոգեկան պէտք մը կը զգայ այդ առեղծուածները լուծելու: Եւ լուծման ամէնէն դիւրին կերպը կը գտնէ, երբ կը մտածէ թէ բնութեան մէջ ամէն բան կենդանի է՝ իրեն պէս. ամէն բան կը սիրէ, կը մտածէ, կը զգայ: Երկիրը մարդկութեան մայրն ու սնուցիչն է. անոր միտք՝ հոգին, ու կմախքը ժայռերն են. իսկ բլուրներն ու լեռները կը կազմեն անոր ստինքները. առուններն ու գետերը կը համապատասխանեն երակներուն, բուսականութիւնը՝ մազերուն են: Հովը — մեր հետաքրքրութեան բուն առարկան — ամենակենսունակ եւ կենսատու բանն է մանուկ մարդկութեան առջեւ, որ կը տեսնէր թէ ինչպէս մէկ ակնթարթի մէջ հովը շարժումի հոսանք մը կը բերէր աներբ անասուն. եւ անդին՝ կը յուզէր համատարած ծովը, որ իր անշարժ վիճակէն յանկարծ ամենէն կեանք մը կը զգենուր. անտանն ու ծովը կ'ապրէին հովին շնորհիւ: Բայց ամէնէն աչքաուու բանն — այս տեսակէտով — էր մարդն ինքնին, որուն կեանքին իսկական պայմանն ու նշանը շնչն էր: Նախամարդն այս շունչը, հոգին ու հովը մի եւ նոյն բաները կը նկատէր. զի երբ տեսնէր, որ հոգեվարքի վայրկենին մանաւանդ՝ մարդուն կուրծքն ուտի եւ իջնայ ուժգին շնչառութիւններով եւ յետոյ մասամբ ծըր երկար շունչ մը արձակելով՝ այլ եւս դադրի կեանքի ու եւ է նշան ցուցնելէ, մարդու շունչը կեանքի սկիզբ կը նկատէր, այսինքն՝ հոգի: Սիրելի բարեկամը, մերձաւորը, հայրը, որ դեռ երէկ կը շրջէր, կը գոչէր ու կը գործէր, հիմայ տապաս ինկած է, պաղ

ու անկենդան, քարի մը կամ դաւադանի մը պէս: Այլ եւս չի՛ տեսներ, չի՛ լսեր, չի՛ զգար եւ չի՛ շնչեր: Գիտակցութիւնն ու կորովը չկան այլ եւս: Յայտնի է որ անոր ինքնութեան մէկ մասը բաժնուած է իրմէ, ամէնէն էական մասը — կեանքին, գիտակցութեանը եւ կամքին կրողը: Եւ այդ կենսակիր մասը բնամարդուն համար տաք շունչն է, չքացած ճասին ամէնէն զգալի մասը, որուն անյայտացումով կեանքի թելը կը կտրի: Ծոռնչի կենդանութեան հետ ունեցած առերեւոյթ կապէն անոր նոյնութիւնը կը ծաղի հոգւոյ հետ, որ նոյն իսկ դարգացած ազգերու (եւ հայ ազգին) քով շունչ բառի համանիշ է¹. այսպէս՝ օրինակի համար սանսկրիտերէնի մէջ âtman (գերման. Atem) = շունչ, ոգի, հոգի. լատիներէն anima = շունչ հոգի (նմանապէս՝ spiritus). յունարէն πνεύμα եւ փսչի. նոյնը կ'արժէ երբայեցեղէնի, ասորերէնի, արաբերէնի համար եւ այլն:

Մայր բնութեան մէջ ալ կար այդ շունչ-հոգին՝ իբր հով. ուտտի, կը խորհէր նախամարդը, հովը էր թէ՛ բնութեան եւ թէ՛ մարդուն մէջ կեանքի սկիզբը: Այսպէս կը մտածէին մեր հայ նախահայրերն իրենց ցեղակից Արիներուն հետ: Այս մասին՝ լսենք մեծ ճոխութեան մը, Մաքս Միւլլերի² խօսքերը. «Հին Արիները թէ իր մը կայ եւ կամ ոչոյ է՝ անո՛վ միայն կրնային բացատրել, որ ինչո՞ւր նիւթ եղող առարկան ա՛յն գործողութիւնը կը կատարէ, կ'ըսէին, ինչ որ ամէն ակնթարթին իրենք կ'ընէին. արդ մարդկային ամէնէն ընդհանուր եւ անընհատ գործունէութիւնը շնչառութիւնն ըլլալուն, արեւու, երկնքի եւ երկրի կայութիւնը կամ ոչոյութիւնը կը բացատրէին՝ արեւը կը շնչէ, երկինքը կը շնչէ, երկիրը կը շնչէ, ըսելով»:

Այսպիսի հայեացքներ թէ եւ բազմաթիւ են մեր Հին Մատենագրութեան մէջ, բայց մենք միտք չունինք զանոնք մի առ մի նկատողութեան առնելու, այլ մեր գննութիւնը պիտի կենդրոնացնենք Եգիպտոսի վրայ. եւ միւս մատենագիրները միայն այնչափ պիտի գործածենք, որչափ Եգիպտոսի տուեալները հաստատուու հարկը պահանջէ:

Եգիպտոս (20—21), Ա. Գրքի, Գ. գլխուն

¹ L. von Schroeder, Arische Religion, 1. Bd., Leipzig 1914, 70—71:
² Հ. Ա. Մատիկեանի քով, Կրօնի ծագումը եւ Գիւցարանութիւն, Վիեննա 1920 (Ազգ. Մասն. Զ), 30—31:

մէջ կը ջանայ արարածներու պաշտօնը հերքել: Այլ եւ այլ փաստեր յառաջ բերելէ յետոյ՝ կ'ըսէ, թէ արարածներն Աստուծոյ վրէժը լուծելու համար նոյն իսկ կրնան զիրենք պաշտօնները պատուհասել. «Թէ ոչ սաստ արարչին նահանջէր զնոսա, մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել՝ առ ի ինդրելոյ զվրէժ անարգանաց հասարակաց արարչին»: Ծովը կրնար ցամաքն ողողելով պատուհաս դառնալ, երկիրը մարդկութիւնը կլլելով եւ «հողմ պարտասեցուցանելով»³, որ կենդանութիւնն է անուայն շնչաւորաց, եւ չիշխէ արգելալ զկենդանութիւնն՝ առանց հրամանի կենդանապահիս»: Բաւական է ուշադիր ակնարկ մը՝ Եգիպտոսի միտքը հասկնալու համար. Եգիպտոսի հովը կը նկատէ բնութեան տարր մը, որ ա՛յնչափ մեծ է իր պաշտօնով ու կարողութեամբ, որչափ որ են ծովն ու երկիրը, ամպրոպը, բուքն ու խորշակը. անոնց պէս հովը կը տիրէ մարդուն վրայ. հովը կրնայ մարդուն կեանքը կարճեցնել, բայց կենդանապահ Աստուծոյ հրամանը զայն ետ կը կեցընէ եւ հովն այլ եւս «չիշխէ արգելալ զկենդանութիւնն»: Որով ակնյայտնի է, թէ բնութեան ծոցին մէջ վարդոյ հովը մի եւ նոյնն է մարդու կեանքը կացուցանող շունչին՝ հոգւոյն հետ: Նոյնչափ որս է նաեւ, որ այդ հովը թէ՛ մարդուն եւ թէ՛ անասուններու — «ամենայն շնչաւորաց» — հասարակաց կենսատուն է:

Նոյն Գրքին ԻԳ. գլխուն մէջ Եգիպտոս (105—108) շատ կարեւոր հատուած մը կը հաղորդէ մեզի, որուն մէջ հով ու հոգի ո՛չ միայն ազգագրական տեսակէտով, այլ նաեւ բառացի՝ նոյնացած են իրարու հետ: «Բայց եւ զայն եւս պարտիմք զիտել, թէ հրեշտակը եւ դեւը եւ ոգիք մարդկան անմարմինք են. զի զհրեշտակաց ասէ՛ արար զհրեշտակս իւր

³ «Պարտասեցուցանել» բայի սովորական իմաստը «յողակցել» է: Եթէ Եգիպտոսի այս հատուածին մէջ այս իմաստով առնենք զայն, զրեթէ իմաստ չ'ըլլեր նախադասութեան մէջէն: Կը կարծեմ՝ թէ պարտասեցուցանել այդ ընդունուած իմաստէն զատ (յողակցել), կը նշանակէր նաեւ «մեղացնել». այս իմաստով միայն՝ մեր ակնարկած տեղիքն ամբողջական եւ կապակից իմաստ մը կ'ունենայ, այսպէս «(բնութեան) պիտի իւրաքանչիւրը կրնայ մարդը պատուհասել» մի մի ի նոցանէն բաւական էր զամենեսին սատակել, ծով ծածկելով, երկիր կլանելով, հողմ սպանալով, որ կենդանութիւնն է ամենայն շնչաւորաց եւ չիշխէ արգելալ զկենդանութիւնն՝ առանց հրամանի կենդանապահիս»:

հոգիս, եւ զպաշտօնեայս իւր բոց հրոյ»⁴: Հոգիս կոչէ զնոսա վասն արագութեանն, որպէս զի ասիցէ՛ թէ քան զհոգմս թեթեւք են»: Բայց ի՞նչ կապ կայ այս խօսքերուն մէջ: — Այս եւ յաջորդ խօսքերուն իմաստը կը կենդրոնանայ յառաջբերութեանս «հոգի» բառին վրայ, որ հոս յայտնի կերպով «հով» իմաստով գրուած է: Այնպէս որ եթէ հոգի բառին տեղ հոգմ զնենք, նախադասութեան իմաստին աղերսը շատ պայծառ կը դառնայ. «Արար զհրեշտակս իւր հողմս, եւ... բոց հրոյ: Հողմս կոչէ զնոսա վասն արագութեանն, որպէս զի ասիցէ՛ թէ քան զհոգմս թեթեւք են»⁵: Սօսքերն ա՛յսպէս հասկնալէ վերջը, շատ բնականօրէն կը գտնենք նաեւ անոնց յաջորդող նախադասութիւններուն կապը. «... որպէս զի ասիցէ՛ թէ քան զհոգմս թեթեւք են, քանզի ողւոյ եւ հողմս մոյ անուն երբայեցեղէն եւ յունարէն եւ ասորերէն նոյն է. նա թէ եւ հայերէն ոք մանր միա զնիցէ՛ նոյնպէս դասնի. յորժամ . . . ուղւոյ նապեալ ոք յումեքէ իցէ՛ ասէ. «Չես ոգի կլանել, չես ոգի առնու», եւ այնու զօրոյս՝ զոր միշտ ծծեմք՝ յայտ առնէ»: Յետոյ ցոյց տալէ վերջ թէ հողմեղէն ու բոցեղէն կոչուած հրեշտակներն աննիւթական (անմարմին) են, այսպէս յառաջ կը տանի. «(Չգեւ) թէպէտ եւ ի մեր լեզու՝ այս չար ասեմք, որպէս ի խարանաց հարցն մերոց առաջնոց ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ, այլ զիտեմք՝ եթէ այսն հողմ է, եւ հողմն ոգի, ըստ յառաջագոյնն սասցելոյ: Քանզի յորժամ մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ասորենայք ասեն՝ այս շնչէ: Եւ վասն տարածութեանն միայն եւ արագութեան կոչին հրեշտակը եւ եւ դեւը եւ հոգիք մարդկան՝ ոգեղէնք, որ է հողմեղէնք: Որպէս վասն սաստկութեանն

⁴ Սողմոս, ճԳ, 4. Երբայեցուց, Ա, 7:
⁵ Եգիպտոսի Այիթաւահն որոշ կախում մ'ունի. սա այս տեղիքը հետեւեալ ձևով կը ներկայացնէ. «Արար, ասէ, զհրեշտակս իւր հողմս եւ զպաշտօնեայս իւր ի բոց հրոյ: . . . Այլ կոչեցան հողմ վասն զօրութեանն զոր ունին. . . ասին եւ հողմ վասն երազ եւ նուրբ բնութեան» եւ այլն. Հ. Յ. Թորոսեան, Այիթաւահն Հովտական կամ վարդապետական թուղթը, Բագմավիւ, 1911, էջ 564: Գիրք թղթոցի մէջ կը հանդիպենք սա մութ կտորին. «(Յ)այս եւ դեւ չարս զհրապուրոզս յոտար վարդապետութիւնս կարգայ. . . ըստ երկնաբազաբացւոյն առնն, որ ասէր զպատերազմ ունել ընդ այս չարս որ ի ներքոյ երկնից, որք խոսվեն եւ տատանեն հողմով: . . . Այսք անուննին, որպէս սաղմոսերդակն ասէ, թէ այս եւ մարդի օրհնեցէք գտէր, զոր ի լուսն անոյզն հողմս փոխարկին: Եւ այսպիս հողմոյ սկիզբն ի շարադեւն Սիմոնէ կախարդէ կել»: Գիրք Թղթոց, Թիֆլիս 1901, 157—158:

բոցեղէն կոչին հրեշտակը, նոյնպէս եւ վասն արագութեանն եւ տարածութեանն հոգեղէնք, որ է հոգեղէնք: Բայց բնութիւնն նոցա ի վեր է քան զհոգի եւ քան զհոգի նուրբ եւ արագ քան զմիտս: Հարկ կը համարիմ ամբողջ հատուածն աշխարհաբարի թարգմանել. «Թէեւ մենք սատանան «Այս չար» կը կոչենք մեր լեզուով — համաձայն ա՛յն սովորութեան, որ մեր նախահայրերուն սնահաւատութենէն⁶ մինչեւ մեզի հասած է —, բայց գիտենք՝ թէ «այս» բառը «հոգի կամ հոգ» կը նշանակէ, «հոգի» բառն ալ իր կարգին «հոգի» ըսել է, ինչպէս որ յառաջագոյն ըսուեցաւ: Վասն զի երբ մենք կ'ըսենք թէ. «Հոգ կը փչէ», Ասորինքը կ'ըսեն. «Ողի կը փչէ»: Իսկ յաջորդ խօսքերուն իմաստը պայծառ է: Ի՞նչ կապով Եզրիկ այդ «քանգին» կը կիրարկէ յանկարծ: — Ծատ դիւրին է խօսքերուն կապը գտնել, երբ ուշադիր ըլլանք «ըստ յառաջագոյնն ասացելոյ» խօսքին, որ կ'ակնարկէ մէկ ու կէս էջ վեր իր յառաջ բերած կտորը, ուր կ'ըսէ՝ թէ «Ողուց եւ հոգմոյ անուն երբայեցերէն եւ յունարէն եւ ասորերէն նոյն է. նա՛ թէ եւ հայերէն ոք մանր միտ դնիցէ (այսինքն. Եթէ հայերէնին ալ ուշադիր ըլլանք) նոյնպէս գտանի»:

Յիշուած «ասորենայք» բառը սակայն՝ Աճառեան կը փափաքի իր նորագիտ ձեռագրին համաձայն սրբագրել «ասորենայք»-ի⁷: «Որովհետեւ բոլորագիր գրութեան մէջ սա եւ աւ շատ նման են... հրատարակիչները... չփոթելով՝ կարգացրին են «ասորենայք» եւ այսպէս ալ մտցուցեր են տպագրին մէջ: Այնուհետեւ բառը թարգմանուել է «ասորիներ», եւ կարծուել է միշտ թէ այս «աստանայ» բառը ասորերէն է. բայց ո՛չ մէկը նկատել է ասորենայք ձեւին տարօրինակութիւնը, փոխանակ ըրելու ասորենայք...:

⁶ Յառաջընթացն «ի խորանայ» բառը մեկնութեան կտրու է: Խորանք էրկու իմաստ ունին. նախ՝ զանազանութիւն. երկրորդ՝ սնահաւատութիւն, աւելորդագաղափարութիւն: Արդեօք հոս առաջին թէ երկրորդ իմաստով անհրաժեշտ է բառս, չէ կարելի վճռել: Բայց աւելի հաւանական կը թուի, թէ աւելորդագաղափարն կը նշանակէ հոս, ինչպէս ուրիշ շատ անգիտեցողք մէջ կը նշանակէ: Օրինակի համար. «Որ խորէ զհոգմա՛ ո՛չ սերմանէ, եւ որ հայի ընդ ամսո՛ւ ո՛չ հնձեացէ». Ժողով. ԺԱ, 4: «Ձաւուրս խորէք եւ զամիսս եւ զգամանակս եւ զտարիս». Գաղատ. Գ, 10: Մանրագիտելի նաեւ խորագաղիւք բառն ունի՝ իբր «աւելորդագաղափար» կամ հմայող:

⁷ Քննութիւն եւ համեմատութիւն Եզրիկայ նորագիտ ձեռագրին, 74:

Ասորերէն այդ տեսակ բառ մը (այս) միայն երեւակայութեան մէջ կը գտնուի: Ուստի կը պաշտպանէ իր «ասորենայք» բառը, որ ըստ իրեն կ'ակնարկէ «Ստորին բարբառի» մը գոյութիւնն, հակադրութեամբ «Վերին բարբառի» մը: Եզրիկ՝ իբրեւ Կողբացի՝ կը խօսէր առաջինը, եւ ասոր համար է որ իրենքը բաժնելով միւսներէն՝ կ'ըսէ. «Քանզի յորժամ մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ստորնայք ասեն՝ այս շնչէ»: «Ո՛րքան ցանկալի էր որ Եզրիկ այս տարբերութեանց վրայ քիչ մը աւելի ծանրանար...»: Յետոյ նոյն աղերսը կը գտնէ այժմեան թրքահայերէնի եւ ուսահայերէնի մէջ: Իրեն կարծեկից է նաեւ Հ. Եզրի ֆէլիկեան⁸: Մեծավաստակ ուսուցչապետն իր «Արմատական Բառարան»ին մէջ դարձեալ կը շնչոտէ իր այս ըմբռնումը. «Ինչպէս Եզրիկին է ցոյց տալիս, Ե. դարուն հիւսիսային Հայաստանի մէջ մարած մի ձեւ էր (այս բառը) եւ գործածուած էր միայն Հայաստանի հարաւային գաւառներում. «Յորժամ մեք (Կողբացիք եւ այլ հիւսիսային Հայք) ասեմք թէ սիք շնչէ, ստորնայք (այն է՝ հարաւային Հայք) ասեն՝ այս շնչէ»:

Ճիշդ է որ տարօրինակ է «ասորենայք» ձեւը եւ հարկ է սրբագրութիւն մը ընել: Բայց նոյնքան տարօրինակ կը թուի մեզի նաեւ Աճառեանի «ասորենայք» ընթերցումը: Սկզբնական ուղիղ գրչութիւնը թերեւս «ասորենայք» եղած ըլլայ: Ամէն պարագայի մէջ հոս խնդիրն Ասորիներուն վրայ է, եւ Եզրիկ ամենեւին գործ չունի ո՛չ «ստորենայ» կոչումը բարբառին եւ ո՛չ ալ «վերին»ին հետ: Հետեւեալներն են մեր փաստերը.

ա. Աճառեան կը շնչոտէ՝ թէ Եզրիկ իբր Կողբացի վերի կամ հիւսիսային բարբառին կը վերաբերի, որուն յատուկ է «սիք շնչէ» բացատրութիւնը. վասն զի մեր Հեղինակը կ'ըսէ. «Յորժամ մեք ասեմք թէ սիք շնչէ, ստորնայք ասեն՝ այս շնչէ»: Արդ, յայտնի է, որ «սիք շնչէ» եւ «այս շնչէ» խօսքերուն մէջ «սիք» եւ «այս» բառերն են որ երկու բացատրութիւններն իրարմէ կը զանազանեն: Եւ ըստ Աճառեանի, «սիք»ը Եզրիկի ու իր վերի գաւառին յատուկ է, իսկ «այս»ը ստորին գաւառի բարբառին: Բայց մենք կը տես-

⁸ Բազմալեզ, 1928, 330:
⁹ Հատոր Ա, 1926, էջ 260. Այս բառի տակ:

ներք որ Եզրիկ թէ՛ «սիք» եւ թէ՛ «այս» բառն անխորաբար կը գործածէ, ինչ որ Աճառեանի մեկնութեան հետ չի կրնար հաշտուիլ: Սնդրական տեղիքէն քանի մը տող վերը կ'ըսէ Եզրիկ. «(զրեւ) ի մեր լեզու այս չար ասեմք... այլ գիտեմք եթէ այսն հոգմ է եւ հոգմն ողի, ըստ յառաջագոյնն ասացելոյ»:

բ. Մեր երկրորդ փաստն «ըստ յառաջագոյնն ասացելոյ» խօսքին վրայ հիմնուած է: «Քանզի յորժամ մեք ասեմք... ստորնայք (ստորնայք) ասեն» նախադասութիւնը պէտք էնք «ըստ յառաջագոյնն ասացելոյ» հասկնալ, ինչպէս որ կը պահանջէ Եզրիկ: Արդ երկու էջ վերն «յառաջագոյն» ըսած էր Եզրիկ թէ «ողուց եւ հոգմոյ անուն երբայեցերէն եւ յունարէն եւ ասորերէն նոյն է» (105): Եթէ այսպէս չհասկնանք, ի՞նչ իմաստ պիտի կարենանք դնել Եզրիկի խնդրական խօսքերուն մէջ. «Գիտեմք՝ եթէ այսն հոգմ է, եւ հոգմն՝ ողի, ըստ յառաջագոյնն ասացելոյ (թէ ողուց եւ հոգմոյ անուն երբայեցերէն եւ յունարէն եւ ասորերէն նոյն է). քանզի յորժամ (իմա՛ որպէս) մեք ասեմք՝ թէ սիք շնչէ, ստորնայք (կամ՝ ստորնայք) ասեն՝ այս՝ շնչէ»:

գ. Վայրկեան մ'ընդունինք թէ «ստորենայք» ընթերցումը հարազատօրէն ուղիղ է: Ի՞նչ փաստ կրնայ զմեզ տարհամոզել, թէ Եզրիկ այդ բառով չէ՛ ուզած մատնանշել ասորիները, որոնք իրականին Հայաստանի ստորին կողմը կը գտնուին:

Իր վարկածը հիմնաւորելու համար, Աճառեան կ'ըսէ՝ թէ ասորերէնի մէջ այդ տեսակ (այս) բառ մը միայն երեւակայութեան մէջ կը գտնուի: Մենք ալ կը հաստատենք, որ յիմարական է «այս» հայերէն բառն ասորերէն նկատելը: Բայց Եզրիկի խօսքը հոս բոլորովին տարբեր իմաստ մ'ունի. այսինքն՝ «ստորնայք (ստորենայք) ասեն. Այս շնչէ» խօսքին «այս» բառը ո՛չ թէ իբր ասորերէն բառ կը գործածեն Ասորիները, այլ հայերէն «այս» բառին հոմանիշ բառը կը կիրարկեն՝ «Սիք շնչէ» գաղափարը յայտնած ատեն: Ուստի ասորերէն բառը թէ՛ «հոգ» ու թէ՛ «հոգի» նշանակող բառ մըն է: Եւ այդ խնդրական բառին կ'ըսեն ruch(a), որ հասարակապէս «հոգ» ու «հոգի» կը նշանակէ:

¹⁰ J. Brun, Dictionarium syriaco-latinum, Be-ryti Phoeniciorum, 1895, 636:

Բառիս դիմաց Brun¹⁰ կը դնէ halitus, spiritus, ventus, anima, mens իմաստները*:

Սնդիրն այսպէսով լուսարանած համարելով՝ յառաջ կը տանինք մեր ուսումնասիրութիւնը: Քանի որ կենդանութեան սկիզբը՝ հոգին, նոյն է հովի հետ, ասկից կը ծագի շունչին աղերսը՝ հովի եւ հոգուց, վասն զի շունչը կեանքի ամենամեծ նշանն է: Եզրիկ գիտէ, թէ շունչը հոգուց հետ կը նոյնանայ. «Յորժամ տաղնապեալ ոք յամեքէ իցէ՛ ասէ. Չետ ողի կլանել, չետ ողի առնուլ», եւ ասով հոգուց եւ հոգմի նոյնութիւնը կը ցուցնէ: Մատիկեան¹¹ այս առթիւ կ'ըսէ. «Երբ հայը

* Եզրիկի Ստորնայք բառին այս բացատրութիւնը խնդրական կը համարիմ: Յամենայն դեպս Եզրիկի Ընդդէմ Աղանդոց մատենին միակ մեկնութիւնը բառն ստորնայք մեզով ունի. իսկ տպագիր օրինակներու ստորնայք ընթերցումին կը պակսի ամէն մեկնական կոտորակ. եւ պէտք է համարիլ Աճառեանի հետ վրիպական եթէ ոչ քաղաքի ընթերցումը: Ուղիղ իմաստին հասնելու համար հարկ է որ ամէն բացատրական փորձ յետոյ ըլլայ ստորնայք ընթերցումին վրայ:

Բառին արմատն ունիմք ստորին (հանստորին, ի ստորին մեզով). հմմտ. «ստորին գաւառ»-ը. Փ. Բուր. 140. «ստորին Ասորեստանայք» Ա. Մակար. Ժ. 69. «ստորին սէք». Եւ. Ե. Պատմ. 626 հւմ: Նոյն մեզ պահուած է նաեւ Ոսկ. Յովհ. Մեկն. Թ, էջ 103. «ի ստորնայքս յանցից անպարհաս» = από της τρυφου, այսինքն յետոյ անց անպարհաս, եւ ռեպար aus dem gemeinen Leben = ի ստորին կենաց: Ուստի ստորնայք ընթերցումը կ'արդարանայ դասական նոր վկայութեամբ:

Գծուար է նշիւ ըսել, թէ Եզրիկ ի՞նչ կ'իմանայ իր Ստորնայքով. «ստորին կողմն բնակիչք», «հարաւային նահանգներ», թէ «արտափնէք», «ոչ-հայ ժողովուրդներ» եւ կամ «նախիկ ժողովուրդ»:

Շատ հաւանական է, որ Եզրիկ «յառաջագոյն»ով ակնարկած ըլլայ վերագոյն երբայեցի, յայն եւ ասորի լեզուներու մէջ հոգմ, հոգի եւ այս բառերու գործածութեան մասին իր տուած մեկնութիւնը: Եւ յայտն շնորհաւորելի է Մեծ. Յօդուածագրի ուշադրութիւնը: Այս պարագային Ստորնայք «արտափնէք», «երեք նահապարհներու ժողովուրդներ» իմաստը կ'առնէ:

Յօդուածագրին պնդումը, թէ Եզրիկ հոս անպատեալ Ասորիները կ'ակնարկէ, կը հանդիպի այն դժուարութեան որ Եզրիկ ասով լուծ կ'ըլլայ երբայեցի եւ յայն լեզուներու մասին. իր խօսքին կարգը կը պահանջէ ասորերէնէ աւելի յունարէնի նախադասութիւն տալ: Ուրիշ կողմէ ալ դժուար է ապացուցանել թէ Ասորիք նաեւ Ասորնայք կամ Ասորնայք մեզով գործածուած ըլլայ. կայ Ասորնայք փոխ. Ասորուց նաեւ Ասորեստանայք բայց ոչ Ասորնայք:

Ի հետուստ քերես մեմուրիին ունենար Ասորնայք մեզով մեկն Սեբիտի Ասորնայք կ'ըսէ: Կը գրէ Սեբ. 116. «Եր նոցա իրիկանց կողմնէ էլ, ի գլխու խանդը յԱսորնայք կողմնէ, որում կախանկտուցն կոչին». բայց այս յայտնապէս բնագրի ազատում մը կ'ենթադրէ, գոր կ'անպարկեմ ուղիղ՝ «ի գեւղ անդր որ ի Գարաւից կողմնէ»: Այս մասին ընդարձակ պիտի խօսիմ այլուր: Հ. Ն. Ա.

¹¹ Անդ, 97:



... շունչն, օդն եւ հոգին մի եւ նոյն բառով կը բացատրէր, ... կա՛մ հոգւոյ պարզութիւնը օդոյ եւ շնչոյն նրբութեամբը կ'ուզէր արտայայտել եւ կա՛մ՝ որ աւելի հաւանական է, կեանքին եւ շնչոյն մէջ եղած ներքին սերտ առնչութիւնը զինքը եւ իրեն հետ բազմաթիւ ազգեր այս միասնական բացատրութեան մղած է: Եզնիկ կը գրէ այլուր (84). «(Աստուած) յոչնչէն կարող եղեւ զշունչ մարդոյն առնել, եւ պահել միշտ կենդանի եւ անմահ»: Եւ դարձեալ (240). «(Փրիխտիայք) զԱստուծոյ իսկ զմիտան եւ զշունչ, թէ մարթիցի Աստուծոյ շունչ ասել, ամենայն արարածոց շնչաւորաց եւ անշնչից բնութեամբ ի նորա էութենէն դնեն»: յաջորդ տողերուն մէջ ալ մի եւ նոյն շունչ, շնչաւոր եւ անշունչ բառերը կը յեղիեղէ՝ հոգի, հոգեւոր եւ անհոգի իմաստներով: Մարդուն բանաւոր կեանքն «ըստ շնչոյն» է (242): Ասկից դատ կենդանիներն ալ անխորաբար շնչաւոր կը կոչուին. «Ձմիան շնչաւորացն հրամայէր շուտել», ինչպէս որ մարդու հոգին ալ հասարակէս (255, 262):

Եզնիկի այս հաւատալիքներն ամբողջութեամբ վերստին կը գտնենք թէ՛ ազգային եւ թէ՛ օտար մատենագիրներուն քով:

Բարսղի «Վեցօրէից»¹² թարգմանչին նշանակալից կտորներէն մին է Ս. Գրքի «Եւ հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց» ծանօթ խօսքին թարգմանութիւնը. վասն զի բաւական մեծ անակնկալ է, երբ այս խօսքը սապէս թարգմանուած կը գտնենք. «Հոգի Աստուծոյ շրջէր ի վերայ ջուրց»: Ինչպէս որոշ կը տեսնուի, թարգմանչին համար «հոգի» բոլորովին նոյն է «հոգի» բառին հետ. եւ չափազանցութիւն չենք ընել՝ երբ ըսենք, թէ Ե. դարու մէջ այս երկու բառերը ո՛չ միայն «հոգի» կը նշանակէին անխորաբար, այլ նաեւ «հոգի, կեանքի սկիզբ»: Ե. դարու մէջ այսպիսի բացատրութեան հանդիպելէ յետոյ, չենք զարմանար՝ երբ մի եւ նոյն բմբունումը յետնազոյն մատենագիրներու քով ալ կը գտնենք: Ազաթանգեղոս¹³ կ'ուզէ մեր առջեւ պարզել այլ կոծութեան մատնուած նաւորդներու վիճակը. փոթորիկին պատճառով՝ անոնք իրենց ուղած ուղղութեամբ չեն կրնար նաւարկել, այլ

¹² Մբրոյն Բարսղի կեսարու ձառք վասն վեցօրէակ արարչութեան, Վենետիկ 1830, 35:
¹³ Վենետիկ 1835, 7:

հոգի ո՛ւր որ տանի զիրենք՝ հոն կ'երթան. «Ո՛չ ըստ անձանց կամաց, այլ ըստ վարիչ ռգւոյն վարելոյ, բունավարեալք ի վերայ յորձանացն»: Ն. Լամբրոնացի¹⁴ կ'ըսէ. «Համանուն է հոգւոյն վասն անօրութեանն. եւ բազում անգամ կոչի հոգին հոգի, որպէս երգէ Դաւիթ¹⁵. «Օրհնեցէք զՏէր հոգի եւ մարիկ»: «Ած Աստուած հոգի ի վերայ երկրի եւ ցածեաւ ջուրն¹⁶». այսինքն՝ սովորական թարգմանութեամբ — «Եւ ամ Աստուած հոգի ի վերայ երկրի» են: «Եւ տէր յարոյց ռգի ի ծովուն: Յարոյց տէր ռգի ի վերայ ծովուն»: Տեղիքս կ'ակնարկէ Յովնանի մարգարէութեան սա խօսքը. «Եւ Տէր յարոյց հոգի ի ծովուն»: Եղիշէի¹⁷ քով ունինք սա ընթերցուածը. «Վասն ասելոյն Դաւիթ թէ. Որ արար զհրեշտակս իւր ի հոգւն եւ զպաշտօնեայս իւր» են: Ուստի այս խօսքերուն մէջ հոգի, ոգի իրարու հետ կը նոյնանան, ինչպէս Եզնիկ կ'ընդունի: Վերջինիս քով մենք գտանք նաեւ յիշուած բառերուն համազօր շունչ բառը, զոր նմանապէս կը հաղորդեն ուրիշ մատենագիրներ ու թարգմանիչներ: «Կոչումն ընծայութեան» մէջ¹⁸ կը կարդանք, թէ մարդը «ի շնչոյ եւ ի մարմնոյ» է: «Տրտում է շունչ իմ մինչեւ ի մահ¹⁹. այսինքն. «Տրտում է անձն (ոգի) իմ» են: Դաւիթ Անյաղթ²⁰ Արիստոտէլի «Յաղագս Աշխարհի» գրութենէն հատուած մը այսպէս կը թարգմանէ. «Հոգի... համանգամայն շունչ լինի անուանեալ: Բայց կոչեցեալ լինի եւ այլ ինչ շունչ, որ ի անկականս եւ ի կենդանին, եւ յամենայնի՝ որ շնչաւոր է եւ ծննդական»:

Հոգի, շունչ, ոգի եւ հոգի գաղափարներուն հայեացքները տոհմային մատենագրութեան մէջ նկատելի վերջ, կը մնայ համեմատել զանոնք օտարազգի հաւատալիքներու հետ: Ըստ Եզնիկի հոգի եւ հոգւոյ մասին ո՛չ միայն Հայերը, հապա նաեւ Երբայեցիներն, Ասորիներն ու Յոյները մի եւ

¹⁴ Հմմտ. Նոր Հայկազեան Բազմբեր, տ. Հոգի, Ոգի:
¹⁵ Սաղմոս ձմեռ, 8, ուր սովորական թարգմանութեամբ է. «Օրհնեցէք զՏէր... հոգի եւ մարիկ»:
¹⁶ Նոր Հայկ. Բառ., Ոգի:
¹⁷ Հարցմունք եւ Պատասխանիք, Վիեննա. Patrol. orient., t. XX, f. 1, էջ 8:
¹⁸ Կոչումն Ընծայութեան կիրքի Երուսաղէմացւոյ, Վիեննա 1832, 58, հմմտ. 346:
¹⁹ Մարկոս ժԳ, 34. Մատթէոս ԻԶ, 38:
²⁰ Մատենագրութիւն նախնեաց. Կորնէն, Մամբրէ, Դաւիթ: Վենետիկ 1833, 611:

նոյն հայեացքները ունին: Եւ իրօք ալ երբայական այս հաւատալիքին հնութիւնը մինչեւ արարչագործութեան ժամանակները կը հասնի. Ադամի ստեղծման միջոցին Աստուած շունչ կը փչէ անդրանիկ մարդուն երեսը եւ զայն կը կենդանացնէ: Թէեւ ամբողջ Ս. Գիրքը լի է այս հայեացքով, բայց անոր մէջէն ամէնէն աչքատուէն միայն հոս յատուց կը բերեմ, Եզնիկի վերայ մարգարէութենէն²¹. «Եւ եղեւ ի վերայ իմ ձեռն Տեառն. եւ եհան զիս հոգւովն Տեառն, եւ եղ զիս ի մէջ դաշտին. եւ այն լի էր ոսկերօք մարդկան: Եւ շրջեցոյց զիս շուրջ զոսկերօքն. եւ ահա բազում յոյժ էին ի վերայ երեսաց դաշտին, եւ ցամաքեալք յոյժ: Եւ ասէ ցիս. Որդի մարդոյ, իցէ՞ թէ կենդանի լինիցին ոսկերքդ այդօքիկ: Եւ ասեմ. Տէ՛ր Տէ՛ր, դու զիտես զայդ: Եւ ասէ ցիս. Որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ ոսկերացդ այդօքիկ եւ ասասցես ցեոսա. Ոսկերք ցամաքեալք, լուարուք զպատգամս Տեառն. Այսպէս ասէ Տէր Տէր ցոսկերքդ ցայդօքիկ. ահաւասիկ ես ամից ի վերայ ձեր շունչ կենդանի. եւ տաց ի ձեզ ջիւս... եւ տաց զոգի իմ ի ձեզ, եւ լինիջիք կենդանի: ... Եւ եղեւ բարբառ ի մարգարէանալն իմում, եւ ահա շարժումն. եւ մերձեցաւ ոսկր առ ոսկր առ իւրաքանչիւր յօդս. եւ տեսի ահա ջիւք եւ մարմինք պատէին, եւ ձգէր ի վերայ նոցա մորթ. եւ շունչ ո՛չ դոյր ի նոսա: Եւ ասէ ցիս. Մարգարեաց որդի մարդոյ, մարգարեաց ի վերայ շնչոյն, եւ ասացես ցշունչն. Այսպէս ասէ Տէր Տէր. Ե՛կ շունչ ի չորից հոգւոյ, եւ փչեա ի մեռեալս յայտօսիկ՝ եւ կեցցեն: Եւ մարգարէացոյ որպէս հրաման ետ ինձ Տէր. եւ եմուտ ի նոսա շունչն, եւ եղեմ կենդանի. եւ կանգնեցան կացին»: Հոս Եզնիկի Եզնիկի հետ բոլորովին համամիտ է. որովհետեւ երկուքն ալ բնութեան մէջ գոյութիւն ունեցող հոգի է, որ մարդու կենդանանալուն եւ կենդանի մնալուն պատճառը կը համարին: Իսրայէլացիներու²² քով «Աստուծոյ հոգւոյն գաղափարին հետ սերտ աղերսներով կ'ըրոնուի մարդկային հոգին: Լեզուական այն բացատրութիւնները, որոնցմով Իսրայէլ հոգւոյ կեանքը եւ էութիւնը կ'արտայայտէ, կ'ըրեւ կարգի են. ա. նեֆէշ, այսինքն՝ հոգի,

²¹ Լէ, 1—11:
²² J. Schwab, Der Begriff der nefesh im Alten Testament, 1913. հմմտ. Biblica, v. 8, p. 444:

անհատ հոգի, կենսունակ էակ (մեր «շունչ» գաղափարին համապատասխանող). բ. ուրախ, որ է ոգի, հոգի, միտք: Երկուքին ալ ելակէտը մի եւ նոյն բանն է — շունչը: ... Նեֆէշն արեան մէջ կը բնակի եւ արեան հետ ալ դուրս կը հոսի²³»:

Յունարէն πνεύμα բառը կը նշանակէ փչում, հով, շունչ, կեանք եւն: Նոյնպէս նաեւ ψυχή ըսել է. «Փչում, շունչ, հոգի»: Հոմերոս²⁴ կը պատմէ, որ, երբ Տըւսոլեմոս Սարպետոնէն կը վիրաւորուի, Յոյները վիրաւորը կը սկսին խնամել. «Վեհանձն Պելաւորը կը սկսին խնամել. Վեհանձն Պելաւորը, անոր (Տըւսոլեմի) զինակից եղբայրներուն մէջ ամէնէն սիրելին, կը կորզէ վէրքին մէջէն հացի փայտէ նիզակը (որ մինչեւ հիմայ խրած կը կենար մարմնոյն վրայ): Այն ատեն հոգին կ'ելլէ անոր մէջէն. ամպ մը կը պատէ անոր աչքերը: Բայց քիչ յետոյ կը վերստանայ իր շունչը, եւ Բորէաս (հովը) իր շնչով կը վերակենդանացնէ զայն՝ անոր կենսագործի կուրծքին մէջ թափանցելով»: — Լատիներէն anima բառն ալ նոյնպէս կը նշանակէ օդ, հով, շունչ եւ հոգի. անոր գրեթէ հոմանիշ է նաեւ spiritus բառը: Բուդղայական²⁵ փրիխտիայութեան մէջ շունչը = âtman նոյն իսկ «Ես (անձ) գաղափարին համազօր կը նկատուի, իրբեւ ենթակայ մը, որուն մէջ մարդու կենսական ոյժերն ու գործողութիւնները կենդրոնացած են: Մարդուն մարմնոյն վրայ շունչի գործիքները (prâna) կ'ըլլեն. իսկ ասոնց ամէնուն զխաւորն âtman է, կենդրոնական ոյժը, որ անձնական կեանքի մէջ կը գործէ եւ յատուց կը բերէ «շունչի անանուն գործիքները», եւ ասկից ալ կը գոյանան «անուն ունեցող» շունչի գործիքները: Տասնապատիկ շունչ կայ արդարեւ մարդուն մէջ», կ'ըսէ Բրահմանա (գիրքը). âtman մետասաներոզն է. իր վրայ հիմնուած են շունչի գործիքները: Մէջտեղն âtman կը կենայ եւ իրեն շուրջը՝ շունչի գործիքները»:

Եզնիկուացիներու²⁶ հայեացքն ալ նոյն է

²³ Dr. H. Schell, Jahwe und Christus (Apol. d. Christent., II. Bd.), Paderborn 1905, 65—66:
²⁴ Իլիական, Ե. հմմտ. W. Helbig, Zu den homerischen Bestattungsbräuchen; Sitzungsber. d. phil.-hist. Klasse d. k. b. Akad. d. Wissensch. zu München, 1900, Heft II, 201:
²⁵ Oldenberg H., Buddha, Stuttgart und Berlin 1906, 27—28:
²⁶ Dr. K. Lang, Ka, Seele und Leib bei den alten Ägyptern, Anthropos, XX, 1925, 71—72: —

յիշուած հաւատալիքներուն հետ: Հով, շունչ, հոգի գաղափարներն իրարմէ անբաժան են եւ իրարու հետ կը նոյնանան Բաբախ մէջ, որ յիշուած իմաստները (հով, հոգի, կեանք) կ'արտայայտէ: Բա կը ներկայացուի իբր մարդագլուխ թռչուն²⁷ մը, որ մեռելի քթին վերեւ կը յածի: Թռչունին ձեռքերուն մէջ կ'ըլլան «Կեանք» եւ «շունչ-հով» նշանադրող պատկերները: «Շունչ-հով» գաղափարն առաջատու մը կը պատկերացուի: Հոգի-թռչունն իր ձեռքի նշանադրերը մեռելի քթին վերեւ կը բռնէ, նշանակելու համար թէ «շունչ-հոգի» այլ եւս անոր քթին մէջ չի գտնուիր, ինչպէս կենդանութեան ժամանակ: Քիթը «կեանք» գաղափարին հետ սերտորէն կապուած է. վասն զի քիթը (իբրեւ շնչառութեան դորձարան) կեանքի կենդրոնը կը համարուէր:

Արարներու²⁸ քով յայտնուած հաւասարապէս հոգի, շունչ, կեանք կը նշանակէ: Ասոնք ալ շունչ-կեանքը քթի հետ կը կապեն. կը հաւատան թէ մահուան վայրկեանին՝ մարդու կեանքը քթէն դուրս կ'ըլլէ: Ասոր համար՝ երբ մէկը բնական մահով մեռնի, կ'ըսեն. «ما جئت آتياً» այսինքն՝ «քթի մահով մեռաւ»: Բնագրերու քով ընդհանրապէս երկու տեսակ հոգի կը զանազանուի: Մին — եւ բուն կենդանութեան տուող հոգին — «շունչ» կը կոչուի. իսկ միւսը՝ սովորաբար «ստուեր»՝ Կենդանական եւ հիւսիսային Ասիոյ ու Աֆրիկէի մէջ²⁹ սովորական հայեացք է այս: Աւստրոնեզեան աւանդութեան³⁰ մը համաձայն՝ մարդկային առաջին գոյքը զուրկ էր կենդանութենէ. բայց աստուածութիւն մը

շունչով կեանք կը շնորհէ անոնց անդամներուն: Ուրիշ տարբերակի մը մէջ՝ առաջին գոյքին 14 զաւակներն ալ անկենդան կը ներկայանան մեղի. եւ կեանք կը զգենուն՝ երբ հովն անոնց կենսազուրկ մարմիններուն վրայ կը փչէ. այս է պատճառը, կ'ըսեն անդրէնածինները, որ մարդու հոգին միայն հովէ կը բաղկանայ եւ հովի պէս անցաւոր ու մահկանացու է մարդը: Երբորք տարբերակ մըն ալ կ'ըսէ, թէ մարդկային առաջին գոյքը քարէ կազմուած՝ անշունչ եւ անշարժ էր յառաջ. մինչեւ որ հովը կու գայ եւ զանոնք կը կենդանացնէ:

Գալով մեր արդի ժողովրդական հաւատքին, յարաբերաբար աւելի քիչ են հովի եւ հոգւոյ նոյնութիւնը հաստատող հաւատալիքները: Վարանդայիներու հաւատքով³¹ հովը նոյն իսկ կրնայ երկիրը շարժել. «Ըլլելիո՞՞ն» կոչուած քամին, որ իբր հրեղէն կը մտածուի, երբ որ երկրի տակ մտնէ ու շարժէ դայն՝ յառաջ կու գայ երկրաշարժը³². նոյն երեւոյթն կը պատահի նաեւ երբ նոյն քամին ալէկոծէ երկրակիր ովկիանոսը: Բայց հովը ոչ միայն բնութիւնը կը շարժէ, այլ նաեւ անասունները, վասն զի Բուլանըխցիներու քով³³ անոնց կենդանութեան սկիզբը «շունչը» կ'ըսուի: Արբահամ քահանայ Կ. Պուսեցի³⁴ իր առասպելախառն «Պատմութիւն Անասնոց» երկին մէջ ձեռն վրայ խօսելով՝ կ'ըսէ. «Արդ ձիոյ բնութիւն թէպէտ չորք տարբերացն է (ըսել կ'ուզէ. Թէպէտ եւ չորս տարբերէն կազմուած է), ապա Աստուած զքամին առաւել ստեղծ ձիոյն քան զմարդոյն. զի յորժամ վազէ՝ որպէս քամի երթայ»:

Տեսնել վերջ՝ թէ հովը բնութեան ու մարդուն կեանք տուող համարուած է, նկատուած

³¹ Ազգագրական Հանդէս, Բ., 221:
³² Եղիշէի մէջ կը կարգանք. «Եւ շարժումն երկրի ոչ է ի կիտէն որ ի շուրս, եւ կամ ի հողմոց ընդ երակս երկրի ընթացելոց, որպէս Աբխաթուէլ սաէ». 36: Եղիշէի ակնարկած այս տեղիքը հետեւեալն է. «... Հողմոց է բացեալ ակունս բազումս ի յերկրի, յորոց ոմանք զիւթացեալ առնեն զհայեայն, եւ այլք անկերակրութիւն տան եւ ոմանք հրամանատրութիւն, որպէս այն որ Դեղքն (իմա՝ ի Դեղքիս) են եւ այն որ ի Լեբալիս (?) եւ այլք ամենեւին սպանանն, որպէս այն որ ի Փրիդիսն է: Բազում անգամ եւ տաւրազակից հողմն յերկրի արտաքս ելեալ ի վայրէ կ'ըմէ ի խորագոյն յատակս երկրի բազում մասունս զողացուցանէ. ի սմանէ յուր անցեալ ի փորոզս երկրի եւ ի բաց փակեալ առ նորք՝ Թաթափեաց զերկրի. եւ ի խորքին իւր ել՝ գործեաց յերկր զայս ինչ՝ զոր սովորակ էմք կոչել շարժում». Յաղագս Աշխարհի, 614—615:
³³ Ազգ. Հանդ., Ե., 182:
³⁴ Բազմակէպ, 1898, 66:

Dr. A. Wiedemann, Der Geisterglauben im alten Agypten, *անդ.*, XXI, 1926, p. 1—37: — T. Hoepfner, Orientalisch-Religionswissenschaftliches aus den griechischen Zauberpapyri Agyptens, Archiv Orientalni, vol. III, 1931, Nr. 1, 141:
²⁷ Շատ անգամ հոգին իբր թռչուն կը պատկերացուի հայ եւ օտարազգի հաւատալիքներու մէջ:
²⁸ Macdonald D. B., The development of the idea of spirit in Islam, Acta orientalia, Lugduni Batavorum, vol. IX, 1931, 307—351: — Dr. M. Bittner, Die heiligen Bücher der Jeziden, Denkschr. d. Akad. d. Wissensch. in Wien, phil.-hist. Klasse, LV. Bd., 4, էջ 50: — T. Kowalsky, Nase und Niesen im arabischen Volksglauben, WZKM, XXXI, Nr. 2—3, էջ 201:
²⁹ P. W. Schmidt, Der Ursprung der Gottesidee, Bd. III, Abt. 2, Münster i. Westf. 1931, 201, 421, 955: — B. Ankermann, Totenkult und Seelenglaube bei afrikanischen Völkern, Zeitschrift für Ethnologie, L, 1928, Berlin, 96, 101, 102, 107, 109, 119, 123: — P. Schebesta, Seelenvorstellungen der Afrikaner, Jahrbuch von St. Gabriel, 1925, 259—275:
³⁰ P. W. Schmidt, Grundlinien, 19, 20, 57, 75:

տանք այժմ հովն իբր յղացնող եւ ծնուցանող: Շատ անգամ հովը կը նկատուի արական սկիզբ մը, որ ո'չ միայն կենդանիներն, այլ նաեւ նոյն իսկ կիները կը յղացնէ. բնական է այսպիսի յղութիւններու մէջ միայն ու միայն հովն է, որ իբր յղացնող կը գործէ: Այս հաւատքն ուղիղ երրակացութիւնն է մեր մինչեւ հիմայ նկատած ա'յն հայեացքին, որուն համաձայն հովը կենդանի արարածներու կենսական սկիզբն է: Արդ քանի որ հովը կը պահէ անոնց կեանքը, կրնայ նաեւ կեանք յառաջ բերել մարմնոյ մը մէջ թափանցելով եւ զայն կենսաւորելով:

Թէպէտ եւ վերջին ժողովրդական ըմբռնումը Եգիպտի քով ուղղակի չենք գտներ, բայց այն լայնածաւալ ազդեցութիւնը, զոր կու տայ Եգիպտի հովուն՝ իբր «ամենայն շնչաւորաց» կենդանութեան պայման, զմեզ կը մղէ ենթադրելու, թէ մեր հեղինակը վերջին հայեացքս ալ գտնէ չափով մը կը ճանչնայ: Բաց աստի այս հաւատալիքը ծանօթ է նաեւ մեր ազգին: Այսպէս Բորչայուի³⁵ մէջ աւանդութիւն կայ, թէ հովը Ս. Կոյսի ականջէն մտնելով՝ կը յղացնէ զայն³⁶: «Գիւրք Վաստակոց» թարգմանիչը³⁷ խրատ կու տայ «Եւ զէզն դէմ արեւելից կանդանցս եւ վազեցս. թէ այնպէս որ պարխրցի (հիւսիսային) հողմովն վազեցրնես՝ որձ սերմանի, եւ թէ հարաւովն՝ էգ»: Ինչպէս կը տեսնուի՝ հոս հովը որոշ դեր մը կը խաղայ:

Նոյն հայեացքները կը գտնենք նաեւ ուրիշ ժողովուրդներու քով: «Է թռչուն, որ ի հողմոյ ծնանի» կ'ըսէ Ս. Բարսեղ Կեսարացի³⁸: Վերգիլիոս³⁹ կը հաղորդէ մեղի, որ մատակ ձիերը բերանին զեփիւտին դարձուցած՝ կը յղանան առանց մերձաւորութեան: Ս. Օգոստինոս⁴⁰ նոյն բանը կը հաստատէ Կապադովկիայի ձիերուն համար, բայց աւելցնելով միանգամայն, թէ հովէ ծնած ձագեր միայն երեք տարի կ'ապրին:

³⁵ Ազգ. Հանդ., X., 216:
³⁶ Երբուպական ազգերու քով ալ կայ նման հաւատալիք մը, որուն համաձայն հրեշտակը Ս. Կուսի վրայ կը փչէ. այս փչումին հետեւանքով Ս. Կոյսը կը յղանայ. L. Radermacher, Griechische Quellen zur Faustsage, Sitzungsber. d. Akad. d. Wiss. in Wien, phil.-hist. Klasse, 206. Bd., 4. Abh., 1927, 321:
³⁷ Գիւրք Վաստակոց, Վենետիկ, 1877, 210:
³⁸ Ճառք վասն փեցորեայ արարչութեան, 171:
³⁹ Մշակականք, Գ.:
⁴⁰ De Civitate Dei, XXI, 5:

Պլինիոս⁴¹ Բնապատում նոյն հայեացքը կը պատմէ ո'չ միայն ձիերու, այլ նաեւ ազաւնիներու մասին: Նման են նաեւ Եգիպտացիներու հայեացքները: Յոյն մատենագիրներն՝ Հորապոլոն նոյնպիսի յղութիւն անդրներու մասին կը յիշէ, ըսելով թէ այս թռչունները կտուցնին հիւսիսային հովուն կողմը կը դարձնեն եւ այսպէսով կը բեղմնաւորուին: Մի եւ նոյն բանը Ելիանն ալ կրկնելով անդրներու մասին, կը յաւելու՝ թէ նաեւ հարաւային ու արեւելեան հովերէն կը յղանան եւ մինչեւ 3 տարի յղի կը մնան: Արդի բնագրերն — իբրեւ հաւատարիմ աւանդապահներ հին դարերու աւանդութիւններուն — մեզի շատ վստահելի համեմատութեան եղբներ կ'ընծեն: Այսպէս՝ Աւստրոնեզիացիները⁴²: Բնիկները կը պատմեն, թէ առաջին կիներն արեւմուտք դարձած՝ արեւմտեան հովէն կը յղանայ: Ուրիշ տեղական աւանդութիւն մը կ'ըսէ, որ արեւն իբր կին այնպիսի երկրէ մը կու գայ մեր քով, ուր միայն կնամարդիկ կան: Արեւու այրն է արեւելեան հովը, որ իր արեւկնոջ վրայ փչելով զայն կը յղացնէ. ասոր հետեւանքով արեւը գաւախներ կը ծնանի:

Այս հայեացքներուն մէջ հովն իբրեւ արական սկիզբ մը կը նկատուի, որ ինչ ինչ տեղեր նոյն իսկ անձնաւոր աստուածութիւն է: Այս անձնաւորումը սակայն պէտք չէ ըմբռնել գերերկրային աստուածութիւն մը, այլ ասոր անձնաւորման զգալի, բներեւութական հիմը՝ (երկրի) հողմն ինքնին է, որ մարդուն մէջ իբր հոգի՝ ոգի կը գործէ, եւ կենդանիներուն մէջ իբր շունչ կը կենսաւորէ: Հովն անձնաւոր աստուածութիւն նկատելն աւելի ուշ ժամանակի մէջ ծագում առած է, քան զայն իբր կենսաւորող անանձ տարր մը համարելը: Հովը երբ անձնաւոր ոգի մը նկատուի, շատ անգամ իր վնասութիւնը գործութիւններով կը գործէ: Համընդհանրութեամբ⁴³ հաւատքով եթէ քամին անձամբ երեւար, բոլոր մարդիկը կը ջարդէր: Արդէն նոյն իսկ առանց անձամբ ալ երեւալու չար հովը շատ անգամ մարդու կը զարնէ եւ կը

⁴¹ Dr. T. Hoepfner, Der Tierkult der alten Agypter, 1914, 105:
⁴² P. Schmidt, Grundlinien, 58, 59, 82—83, 99:
⁴³ Ազգ. Հանդ., 2, 115:

հիւանդացի⁴⁴։ Հ. Ալիշան⁴⁵ կը գրէ, թէ «պատմութեան մի մէջ» կախարդ մը կ'ըսէ մէկուն. «Ո՛վ որդեակ, դա որ նեղէ գրեզ՝ չէ դեւ, այլ Հողմ դիպաւ քեզ»։ Եւրոպիացիները⁴⁶ «Հանդէպք» բառով կը հասկնան «մտացածին ոգիներու (կամ մեռելներու) հովուն հանդիպիլը», որուն ենթարկուողը կը հիւծի։ Ինքնաբերաբար ուշադրութիւններ կ'ուղղուի «այսահար» բառին վրայ. եւ մենք կ'եզրակացնենք՝ թէ հիները դիւահարութիւնը չար հովէ յառաջ եկած կը նկատեն. զի Եգիպտոսի ինքնին կը հաստատէ, որ «Այն հողմ է, եւ հողմն ոգի»։ Ասկից դատ «այս չար» բացատրութիւնն ալ կը պայծառանայ՝ այս տեսակէտով նկատուած։ «Չար այն», այսինքն չար հովը մարդու կը դարնէ եւ դայն «այսահար»՝ որ է ըսել «հովէ դարնուած» կը դարձնէ։ Իրբեւ այսպիսի՝ չար հովը՝ չար ոգի մըն է, վասն զի «այս» միանգամայն «ոգի» ըսել է. ուստի յայտնի է թէ ինչո՞ւ «այս չար» անուանած են մեր նախնիները բո՛ւն չար ոգին՝ սատանան։

Ո՛չ միայն ոգի եւ հողի բառերը լեզուաբանօրէն նոյն են, այլ նաեւ հով ու հողմ բառերն ալ ստուգաբանօրէն կը նոյնանան նախորդ երկու բառերուն հետ։ Աճառեան լեզուաբանական տեսակէտով կը գրէ հողի, սգի, հով, հողմ բառերու մասին⁴⁷. «Հոգի, ոգի. բնիկ հայ բառ՝ հնիս. *rogio* ձեւից, որ ծագում է *peu* «փչել, շնչել» արմատից... Հոգի նշանակում է բուն «փչիւն, շունչ»։ Նախնական մարդու համար «հոգի, քամի, շունչ, օդ, փչիւն» մի եւ նոյն գաղափարներն էին... Ըստ այսմ ունինք զանազան լեզուների մէջ՝ համապատասխան բառեր «հողի, շունչ, քամի» իմաստներով»։ Հողի եւ ոգի բառերու հետ նոյն է «հով»ը, «բնիկ հայ բառ՝ հնիս. *rou* «փչել, փչիւն» արմատից»։ «Հովմի» մասին ալ կը գրէ. «Բնիկ հայ բառ, հնիս. *onamo*- ձեւից, որ նշանակում է «շունչ, փչիւն, քամի». բուն արմատն է հնիս. *enə-, onə, ʹnə* «շնչել, փչել», որ *an-* ձեւով երեւում է զանազան

լեզուների մէջ. յիշենք այս տեղ կարեւորներից յն. *ἀνεμος* «շունչ, քամի», *ἀνεµος*, *νεµος* «առանց քամու հանդարտ օդ»։ լատ. *anima* «օդի հոսանք, քամի, շունչ, հողի». սանս. *anila*- «քամի, շունչ». հիւլ. *animm*, նիւլ. *anam* «հողի»...։ Հայերէնի մէջ հնիս. *onəmo*- ձեւից միջին օ ընկել է ըստ օրինի, *-nm-* տարանմանութեամբ վերածուել է *-n-*... եւ միավանկ **n*ով ձեւի վրայ աւելացել է *h* յաւելուածը, ինչպէս յաճախ⁴⁸։

Երբ կ'ըսենք թէ Եգիպտոս ու հողին իրարու հետ կը նոյնացնէ, այս ըսել չէ թէ Եգիպտոսի իր աստուածաբանական ու փիլիսոփայական խոր հմտութիւնը պահ մը կը մոռնայ եւ մինչեւ ուսմիկ հայեացքներ ընդգրկելու կը ստորնանայ։ Այլ՝ ասով ըսել կ'ուզենք, թէ Եգիպտոսի զիտէ թէ հայերէնի մէջ «հողմ, այս, շունչ, հողի, ոգի» իրարու հետ նոյնացած են։ Ինքն ալ կը դործածէ այդ բառերն՝ իրր իր հայրենի լեզուին բառերը, որոնք իրենց այդ նշանակութիւնն իրմէ յառաջ արդէն ստած, մինչեւ իրեն հասած են եւ այդ իմաստով փիլիսոփայական հակասութիւն մը կը պարփակեն։ Այսու հանդերձ Եգիպտոսի կը դործածէ զանոնք՝ «որպէս ի խորանայ հարցն մերոց առաջնոց՝ ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ»։ Թէեւ հրեշտակներու եւ մարդկան հողին «հողմ» եւ շունչ» կ'անուանէ, բայց միանգամայն ուշադիր կ'ընէ զմեզ. «Եթէ ի բնութենէ հողմոյ էին, ապա եւ նոքա յերաւի մարմնաւորք կոչէին եւ ո՛չ անմարմինք»։ Նոյնպէս «շունչ մարդոյն անմարմին» է։

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ



⁴⁸ Հմմտ. W. Oehl, Elementare Wortschöpfung, Anthropos, XIV, 444; XVI—XVII, 765, 772 եւն։

⁴⁴ Մ. Արեղեան, Հայ ժողովրդական առասպելները, 373։
⁴⁵ Հին հաւատք, 1895, 205։
⁴⁶ Յ. Գաղանձեան, Եւրոպիոյ Հայոց գաւառաբարբառը։ Վիեննա (Ազգ. Մատեն. ԼԴ), 35։
⁴⁷ Արմատական բառարան, Գ. հատոր (1931), էջ 345—346, 373, 360—361։ Հմմտ. նաեւ *rouf* եւ *huf*։

ԱՂԵՔՍԱՆԳԻ ՄԱՆԹԱՅԵԱՆՑ
ՄԵՃԱՎԱՃԱՐԱԿԱՆ ԵՒ ԲԱՐԵԳՈՐԹԸ

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ։

(Շարունակուիլիս)

Թ.

Հայ քատրոնը կովկասում։ Թիֆլիսում հայերէն ներկայացումներ սկսել են տալ, անցեալ դարի միջիններն, նախ Ներսիսեան գաղտնի ընդարձակ սենեակներից մէկում։ Երբ այցելուների թիւն սկսել է աճել, Հայ թատերասէրները յատուկ դահլիճ են վարձել մի մասնաւոր բնակարանի մէջ, որ ծանօթ էր «Շէրմազանեանի դարբաս» անունով։ Իսկական թատրոն, այս բառի բուն նշանակութեամբ, կառուցել է Հայ զօրապետ Երեմիա Արծրունին, «Մշակի» խմբագիր-հրատարակիչ Գրիգոր Արծրունու հայրը, իր նշանաւոր «քարալանջայի» մէջ, քաղաքի կենդրոնում։ Այնուհետեւ թատրոնական դահլիճներ են ստեղծուել նաեւ քաղաքի ուրիշ հայաչափ մասերում, ուր ներկայացումներ էին տալիս տեղական թատերասէրների խումբեր։ Անցեալ դարի վերջերն էր, որ հիմնուեց Թիֆլիսի ամենագեղեցիկ թատրոնը. «Արխատական ընկերութեան թատրոն» կոչուած, ուր Հայ դերասանական խումբը գտաւ իր մշտական եւ կանոնաւոր բեմը¹։

¹ Հետաքրքրական են այս շէքի կառուցման պարագաները։ Թիֆլիսի հինաւորեց Հայ քաղաքացիներից մէկը, Եսայի Փիթոյեան, որ «Ի. Ե. Փիթոյեմ» առեւտրական տան պետն էր, ուղեց անդամակցել տեղական «Կրուտով» ակումբին, որի անդամները զլխաւորապէս՝ պետական աստիճանաւորներ էին, մեծ մասամբ ուսու եւ վրայի. Հայ քիչ կար։ Այս ժամանակ այդ շրջանը ինտ հակակրանք էր տածում Հայ Բուրժուազիայի, Հայ առեւտրականների նկատմամբ եւ բուրժուական ժամանակ Փիթոյեանի անդամակցութիւնը մերժուեց։ Դրանից սաստիկ վշտացան ոչ միայն Փիթոյեան ինք, որի կինը ուս դերասանուհի էր, այլ նաեւ այն երկու ուս բարեկամներն, որոնք յանձնարարել էին Փիթոյեանին։ Այս բարեկամներից մէկը նշանաւոր ուս փաստաբան Օպոչինին էր, որ յետոյ կովկասի ուսական պաշտօնական լրագրի խմբագրապետը դարձաւ եւ շատ համակիր էր Հայոց։ Փիթոյեան եւ Օպոչինին որոշեցին իրենց պարտութեան վրէժն առնել հետեւեալ կերպով։ Փիթոյեան սկսեց շինել, Թիֆլիսի կենդրոնում մի գեղեցիկ եւ ընդարձակ շէք, որ պիտի բովանդակէր իր մէջ ակումբի համար ամենամեծ յարմարութիւններն եւ միանգամայն նորադայն ոճով մեծ թատրոն։ Այս նոր ակումբը պիտի կոչուէր «Արխատական Ընկերութիւն», որին պիտի անդամակցէին անխախտ ամէն ազգից արժանաւոր անձեր։ Շէքը այնչափ մեծ ծախք

կովկասի Հայ թատրոնի ոսկեդարն է համարուում 1880ական շրջանն, երբ նախաձեռնութեամբ մի Հայ իշխանի, Ամատունի լաւագոյն թատերական խումբը կազմուեց։ Այդ շրջանումն էր, որ Կ. Պոլսից հրաւիրուեցան Պետրոս Աղամեան, դերասանուհիք Հրաչեայ, Սիրանոյշ եւ այլն։ Այնուհետեւ հիմնեցին «Հայկական Դրամատիքական Ընկերութիւնն», որ իր վրայ առաւ Հայ թատրոնի դեկավարութիւնը։

Մանթաշեանց ջերմ սիրող եւ պաշտպան էր Հայ թատրոնի։ Թիֆլիսում գտնուած ժամանակ նա իր մշտական օթեակն ունէր եւ յաճախ գալիս էր ներկայացումներին։ Նա այս կամ այն ձեւով միշտ օգնում էր դերասաններին²։

1907 Դեկտ. 17ին Արախտական Ընկերութեան թատրոնում ստուեց տաղանդաւոր դերասան Յովհ. Արէլեանի 25ամեայ բեմական գործունէութիւնը։

Թատրոնում, ինչպէս ասում են, ասեղ գցելու տեղ չկար։ Շնորհաւորութիւններից յետոյ, Արէլեան բեմից իր շնորհակալութեան ճառն ասաց սրտի խորքից բղխած։ Դեռ մինչեւ հիմայ կարծես հնչում են ականջիս մէջ նրա աղերսալից խօսքերը. «Մի յնդիլիք ունիմ Հայ Հասարակութիւնից... Տուէք մեզ, Հայ դերասաններին, մի անկիւն, մի սեպիակամ անկիւն...»։ Արէլեան խըն-

պահանջեց, որ Փիթոյեան պիտի չկարողանար իր անձնական միջոցներով լրացնել եթէ Այդ. Մանթաշեանց օգնութեան չհասնէր։ Մանթաշեանց Ի. Ե. Փիթոյեմ անուարական տան գլխաւոր բաժնետէրն էր եւ ամբողջ այդ ծախքը Փիթոյեանի անձնականից բառնալով փոխադրեց առեւտրական տան հաշուին, որ նշանակում էր, մեծ մասամբ ընդունեց իր վրայ, որով կարելի էր շէքը վերջացնելով թէ՛ նոր ակումբը հաստատել եւ թէ՛ նոր թատրոնը բանալ։

² Իրբեւ գուարճալի դէպք պատմեմ հետեւեալը։ Թիֆլիսում մի տաճկահայ երիտասարդ դերասան կար Գալֆայեան անունով, որ երեւակայում էր թէ ինքն երկրորդ Աղամեան է, թէեւ իրօք այս վերջինի գլուխն եւ արտաքին մի քանի ձեւերը միայն ունէր, բայց ոչ նրա տաղանդը։ Մա մի օր եկել էր մեր գրասենեակն եւ կամեցել էր Մանթաշեանցին ներկայանալ։ Մանթաշեանց չէր ընդունել եւ ուղարկել էր ինձ մօտ։ Գալֆայեան եկաւ իմ սենեակն եւ բացատրեց թէ Թիֆլիսի դերասանական խումբը նրան ըստ արժանւոյն չէր գնահատում, ուստի ինդրում էր Մանթաշեանցի պաշտպանութիւնը։ Միեւնոյն ժամանակ նա ինձ դատարար էր, որ Մանթաշեանց նրան միջոց տայ իր արուեստի մէջ կատարելագործուելու։ Եւ որպէս զի ես էլ համոզուիմ եւ ըստ այսմ միջնորդեմ, սկսեց յանկարծ Համլէթի «Լինէլ թէ չլինէլ» (To be or not to be) տեսարանը ներկայացնել բարձրաձայն...։ Այս աղբուկը յսելով Մանթաշեանց ներս մտաւ իմ սենեակս եւ մնաց դարձապաշտ։ Յետոյ գրպանից 50 բուրլի հանելով, գրեց Գալֆայեանի ձեռքը եւ «գնա, որդի, մեր գրադմունքը մի խանդարի» տեսելով ճամբեց։